

Բանալի բաներ՝

մրցակցություն, գերիշխող դիրք, հակամրցակցային համաձայնություն, համակենտրոնացում, տնտեսական քաղաքականություն:

Տնտեսական մրցակցության քաղաքականությունը ցանկացած պետության կողմից մրցակցության պաշտպանության ոլորտում իրականացվող միջոցառումների ամբողջությունն է, որն ուղղված է գործարար համայնքի գործունեության համար հավասար պայմանների ապահովմանը: Մրցակցային քաղաքականությանը եւ կարգավորումներին անդրադարձել են բազմաթիվ գիտնականներ, որոնց կողմից հիմնադրված առանձին ուղղություններն ու դպրոցները մինչ օրս ուշադրության կենտրոնում են պահում մրցակցությանը վերաբերող հիմնախնդիրները: Մրցակցության քաղաքականության մասով տարբեր տնտեսագիտական դպրոցների ուսումնասիրության հիմնական ուղղությունը եղել է մնում է այն, թե մրցակցային միջավայրի ձեւավորմանը որքան պետք է լինի պետության մասնակցության չափը: Մասնավորապես՝ մրցակցային քաղաքականությանը վերաբերող աշխատություններում գիտական շրջանակները միմյանցից տարբերվել են ապրանքային շուկաներում խոշոր ընկերությունների առկայության, վերջիններիս գործունեության կարգավորման առումով նշված շուկաներում մուտքի խոչընդոտների վերացման անհրաժեշտության եւ մի շարք այլ հարցերի վերաբերյալ ունեցած մոտեցումներով: Միաժամանակ տնտեսագիտական գրականության ուսումնասիրության հիման վրա կարող ենք նշել, որ պետությունը մրցակցային միջավայրի ձեւավորմանը կարող է մասնակցել ոչ միայն տնտեսության առանձին ոլորտներում կարգավորումների իրականացմամբ, գործարարների համար կիրառման ընթացակարգերի սահմանմամբ, այլ նաեւ պետական մասնակցությամբ ընկերությունների միջոցով ձեռնարկատիրական գործունեության իրականացմամբ: Հաշվի առնելով պետության առկայությամբ պայմանավորված պետական կարգավորումների անխուսափելիությունը՝ ներկայումս առավել տարածված է կարգավորվող կապիտալիզմի մոդելը, երբ պետությունը նվազեցնում է դեպի տնտեսություն մասնակցության չափը՝ միաժամանակ ապահովելով ազատ եւ հավասար մրցակցային հնարավորություն-

ներ բոլոր տնտեսավարողների համար: Ժամանակակից աշխարհում մրցակցության պաշտպանության ոլորտում առկա հիմնախնդիրներն էական կարեւորություն ունեն տնտեսության զարգացման համար եւ դրանց լուծմամբ զբաղվում են ինչպես առանձին երկրների մրցակցային մարմինները, այնպես էլ միջազգային մասնագիտացված կազմակերպություններն ու կառույցները: Տնտեսությունում մրցակցային միջավայրի ձեւավորումը դրական արդյունքներ է ապահովում ինչպես պետության, այնպես էլ գործարարների եւ սպառողների համար: Մասնավորապես՝ պետությունը մրցակցային միջավայրի պայմաններում հնարավորություն է ստանում ձեռք բերել ապրանքներ եւ ծառայություններ ավելի ցածր գներով (պետական գնումներ), տնտեսել սոցիալական ծրագրերի իրականացման նպատակով ծախսվող գումարները, քանի որ մրցակցության արդյունքում տեղի է ունենում կապիտալի վերաբաշխում հասարակության տարբեր խմբերի միջեւ, ինչպես նաեւ ապահովում է բյուջեի հարկային եկամուտների ծավալների մեծացում: Գործարար համայնքը մրցակցության պայմաններում հնարավորություն է ստանում արտադրողականության մեծացման եւ նորարար տեխնոլոգիաների կիրառման միջոցով բարձրացնելու իր մրցունակությունը՝ նվազեցնելով արտադրանքի գները եւ ավելացնելով թողարկվող ապրանքատեսականիս, ինչի արդյունքում շահում են նաեւ սպառողները:

Մրցակցության քաղաքականության վերաբերյալ ուսումնասիրության շրջանակներում առանձնակի կարեւորություն են ներկայացնում մրցակցության քաղաքականություն իրականացնող մարմինները, դրա իրականացման ուղղություններն ու մեխանիզմները: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ մրցակցային մարմիններն ունեն կարեւորագույն առանձնահատկություններ կառուցվածքի, ինքնուրույն գործելու հնարավորության, վարչարարության իրականացման եւ մի շարք այլ առումներով:

Մասնավորապես՝ աշխարհում մրցակցային մարմինների 62%-ը գործում են գործադիր իշխանության մնացյալ մարմիններից անկախ, որի արդյունքում էլ ուսումնասիրությունների իրականացման եւ որոշումների կայացման հարցում ունեն ինքնուրույնության բարձր աստիճան: Հաջորդ խոշոր խումբը ձեւավորում են այն երկրների մրցակցային մարմինները, որոնք գործում են նախարարությունների կազմում որպես առանձնացված ստորաբաժանումներ՝ (32%-ը): Որոշ երկրներում մրցակցային մարմինները հանդիսանում են որպես մաս-

ՀՏԴ 339.137.2

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՃԱԿՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐ

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է Գիտության եւ կրթության հայ ազգային հիմնադրամի (ԳԿՀԱՀ, Նյու Յորք, ԱՄՆ) կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում

Արման
ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
Տնտեսագիտության
թեկնածու



նագիտացված դատարաններ (4%-ը), եւ կան երկրներ, որտեղ մրցակցային մարմինները հանդես են գալիս որպես նախարարություններ (2%-ը)⁵: Վերը նշվածով պայմանավորված՝ մրցակցային մարմինները տարբերվում են նաեւ դեկավար կազմի կառուցվածքով: Մասնավորապէս մրցակցային մարմինների 60%-ը հանդիսանում են կոլեգիալ մարմիններ, իսկ մնացյալ 40%-ը՝ ոչ կոլեգիալ մարմիններ, որոնցում որոշումներն ընդունվում են միանձնյա կարգով⁶:

Մրցակցության պաշտպանության ոլորտում առկա հիմնահիմնդիրներին համակարգված լուծումներ տալու եւ տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականություն իրականացնելու նպատակով Հայաստանում 2001թ. ստեղծվել է Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, որի կողմից վերջին տարիներին իրականացվել է բավականին մեծ աշխատանք՝ հավասար մրցակցային պայմաններ ապահովելու նպատակով: Անկախ այն հանգամանքից, մրցակցային մարմինները գործում են գործադիր իշխանության կազմում, թե ունեն ինքնուրույն գործելու ավելի լայն հնարավորություններ՝ ընդհանուր առմամբ, մրցակցության քաղաքականությունը պետք է համապատասխանի պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության սկզբունքներին եւ նպաստի տնտեսության զարգացման տեմպերի արագացմանը: Առավել լայն իմաստով՝ մրցակցության պաշտպանության բնագավառում Հանձնաժողովին վերապահված են գործունեության հինգ ուղղություններ⁷, որոնք միտված են.

- ✓ մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման բացահայտմանը,
- ✓ հակամրցակցային համաձայնությունների կնքմանը (կայացմանը) եւ դեպքերի բացահայտմանը,
- ✓ համակենտրոնացման գործարքների նկատմամբ վերահսկողության իրականացմանը,
- ✓ անբարեխիղճ մրցակցության գործողության բացահայտմանը,
- ✓ պետական օժանդակության նկատմամբ վերահսկողության իրականացմանը:

Մրցակցային մարմինների խնդիրների շարքում առանձնահատուկ տեղ է վերապահված մենաշնորհ եւ գերիշխող դիրք ունեցող ընկերությունների կողմից կատարվող չարաշահումների բացահայտմանը: Նշենք, որ որպէս ընդհանուր սկզբունք տարբեր երկրների մրցակցային օրենսդրություններով մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունենալն ինքնին խախտում չի համարվում, այլ մրցակցային օրենսդրությամբ՝ արգելվում է մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը⁸: Վերջինիս իմաստը կայանում է նրանում, որ մենաշնորհ կամ գերիշխող դիրքի առկայությունը կարող է ձեւավորվել նաեւ՝ անկախ այդ դիրքն ունեցող տնտեսվարող սուբյեկտի ցանկության: Այսպէս օրինակ ընկերության մասնաբաժինը կարող է շուկայում մեծանալ, եթէ մրցակից ընկերությունները որոշում կայացնեն նվազեցնել իրենց մասնակցության չափը տվյալ շուկայում կամ առհասարակ դուրս գալ այդ շուկայից: Մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող ընկերությունների կողմից կատարվող չարաշահումները հիմնականում վերաբերում են հետեւյալին.

● գների միջոցով կատարվող խախտումներ, որոնք դրսեւորվում են տնտեսական գործունեությունը չպայմանավորված գնային փոփոխությունների իրականացմամբ, խտրական գների կիրառմամբ, ինչպէս նաեւ գների պահպանմամբ, եւ դա այն դեպքում, երբ դրանց փոփոխությունը օրինաչափ էր եւ պետք է տեղի ունենար ազատ մրցակցության պայմաններում,

● մրցակիցներին շուկայից դուրս մղելուն ուղղված խախտումներ, երբ մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտները սահմանափակում են շուկայում իրենց մրցակիցների ներկայացվածությունը, վերջնական սպառողներին ապրանքների իրացման հնարավորությունները եւ այլն,

● խտրական պայմանների կիրառմանը վերաբերող խախտումներ, երբ մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներն իրենց գնորդների նկատմամբ սահմանում են խտրական պայմաններ, եւ արդյունքում միեւնոյն գործունեությամբ զբաղվող ընկերությունները հայտնվում են անհավասար պայմաններում,

● շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտներին տարբեր պայմանների պարտադրման միջոցով կատարվող խախտումներ, երբ մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող այդ սուբյեկտներն իրենց գնորդներին պարտադրում են ձեռք բերել նաեւ այլ ապրանքներ, կատարել լրացուցիչ վճարումներ, խզել գործարար կապերը այլ մատակարարների հետ եւ այլն,

● սպառողների շահերը վնասելու միջոցով կատարվող խախտումներ, երբ մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտները կրճատում են արտադրության, ներմուծման, իրացման ծավալները եւ շուկայում առաջացնում են դեֆիցիտ:

Նմանօրինակ վարքագիծը համարվում է մրցակցության օրենսդրության խախտում նաեւ այն դեպքում, երբ ընկերությունները չունեն մենաշնորհ կամ գերիշխող դիրք, սակայն համաձայնության են գալիս միմյանց հետ՝ մրցակցություն սահմանափակելու նպատակով: Վերը նշված եղանակներից բացի, հակամրցակցային համաձայնությունները դրսեւորվում են նաեւ տնտեսվարող սուբյեկտների միջեւ շուկաների բաժանմամբ, պետական գնումների գործընթացում պայմանավորվածությունների կայացմամբ եւ այլ միջոցներով: Հակամրցակցային համաձայնությունները դասվում են առավել դժվար բացահայտվող խախտումների շարքին, որոնց ուղղությամբ բազմաթիվ երկրներում մրցակցային մարմինների լիազորությունները բավարար չեն եւ ընդլայնման կարիք ունեն: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հակամրցակցային համաձայնությունների բացահայտման համար անհրաժեշտ են ստուգումների լայն լիազորություններ, այդ թվում՝ այսպէս կոչված «հանկարծահաս ստուգումների» ինստիտուտի ներդրումը⁹: Այս կապակցությամբ նշենք, որ ներկայումս Հայաստանի մրցակցային մարմինը օժտված չէ նման գործիքակազմով, ինչի արդյունքում հակամրցակցային համաձայնությունների բացահայտման հնարավորություններն էապէս նվազում են, իսկ ապացույցների ձեռք բերումը՝ սահմանափակվում:

Առանձին ապրանքային շուկաներում եւ ոլորտներում մրցակցային միջավայրի խաթարմանը կարող են հանգեցնել նաեւ տնտեսվարող սուբյեկտների անբարեխիղճ մրցակցության գործողությունները, որոնք դրսեւորվում են տնտեսվարող սուբյեկտների կամ նրանց գործունեության վերաբերյալ սպառողների շրջանում շփոթություն առաջացնելու, վարկաբեկելու, հասարակությանը մոլորեցնելու, դրանց համբավը վնասելու, գործունեությանը վերաբերող գաղտնիք ներկայացնող կարելու տեղեկությունները հրապարակելու եղանակով: Պետք է նկատել, որ մրցակցության միջավայրի խաթարման մյուս դրսեւորումների համեմատ անբարեխիղճ մրցակցության գործողությունները սպառողներին հիմնականում վերաբերում են ուղղակիորեն, իսկ դրանց հետեւանքով ստացվող վնասները վրա են հասնում շատ արագ: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ բոլոր երկրներում է, որ տնտեսվարող սուբյեկտների անբարեխիղճ մրցակցության գործողությունների ուսումնասիրությունը գտնվում է մրցակցության մարմինների լիազորությունների ներքո:

Մրցակցային մարմինները վերահսկողություն են իրականացնում նաեւ համակենտրոնացման գործարքների նկատմամբ: Հարկ է նշել, որ համակենտրոնացումներն արդյունք են ոչ միայն տարբեր ընկերություններում ընդունված կառավարչական որոշումների, որոնք հաճախ պայմանավորված են գործունեության ոլորտի փոփոխության անհրաժեշտությամբ, ընկերության տնտեսական ցուցանիշների բարելավմամբ, նոր տեխնոլոգիաների ներդրումով եւ այլն, այլ նաեւ ժամանակակից աշխարհում տեղի ունեցող կոոպերացման

բարձր մակարդակի ինքնին ստիպում է ձեռավորել վերագագային կամ ներագագային կորպորացիաներ, որոնց տիրապետման ներքո են հայտնվում նախկինում միմյանց մրցակից համարվող ընկերությունները: Ներկայումս Հայաստանում գործող օրենսդրության համաձայն՝ խոշոր ընկերությունները փայաբաժինների, ակտիվների ձեռքբերման եւ մի շարք այլ դեպքերում նման գործարքներ իրականացնելուց առաջ պարտավոր են դիմել մրցակցային մարմին: Սակայն Հանձնաժողովը չունի հնարավորություններ բաժնետիրական ընկերություններում մասնակիցների փոփոխության վերաբերյալ կատարվող գործարքների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար, ինչի արդյունքում էլ բաժնետիրական ընկերությունները հաճախ չեն ներկայացնում համակենտրոնացման հայտարարագրեր: Ուստի՝ այս ուղղությամբ անհրաժեշտ է բաժնետիրական ընկերությունների գործարքների վերաբերյալ տեղեկատվական բազաները Հանձնաժողովի համար դարձնել հասանելի: Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողությունն այն միակ գործիքն է, որով մրցակցային մարմինները պայքարում են ապրանքային շուկաներում եւ ոլորտներում կենտրոնացվածության մակարդակի նվազեցման, խոշոր ընկերությունների կողմից իրենց մրցակիցների հետ միաձուլման դեմ, եւ դրանք այն դեպքերում, երբ նման գործարքների արդյունքում մրցակցությունը կարող է սահմանափակվել:

Մրցակցային մարմինների գործունեության առանձին ուղղություն է հանդիսանում նաեւ պետական օժանդակությունների նկատմամբ հսկողությունը: Ժամանակակից աշխարհում նկատելի են մրցակցային միջավայրի խաթարման ձեւերի էական փոփոխություններ: Այսպես, եթե նախկինում մրցակցային մարմինների հիմնական ուշադրությունը կենտրոնացված էր մրցակցային միջավայրը խաթարող շուկայի մասնակից տնտեսավարող սուբյեկտների գործողությունների վրա, ապա ներկայումս դրան ավելացել են նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան որոշումների արդյունքում շուկաներում առաջացող տարբեր խեղաթյուրումների նկատմամբ հսկողությունը: Վերը նշված իրավիճակները կանխարգելելու նպատակով մրցակցային մարմինների կողմից կիրառվում է մրցակցային միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող պետական օժանդակության արգելման գործիքակազմը: Ըստ Եւրոյան, պետական օժանդակության կիրառմամբ պայամանավորված, շուկայում Եապես մեծանում են օժանդակություն ստացած ընկերության հնարավորությունները, եւ նշված ընկերությունը մրցակիցների համեմատ ստանում է տնտեսապես չիմնավորված առավելություն: Այս կապակցությամբ նկատենք, որ Հայաստանում մրցակցային մարմինը պետական օժանդակության վերաբերյալ ուսումնասիրություններ չի իրականացնում, որը պայմանավորված է ոլորտը կարգավորող համապարփակ օրենսդրության բացակայությամբ:

Միաժամանակ՝ մրցակցային մարմինների փորձը ցույց է տալիս, որ մրցակցության պաշտպանության ոլորտում արդյունավետորեն գործող տնտեսական մրցակցության միջավայրը հնարավոր չէ ապահովել միայն մրցակցային մարմինների գործունեության արդյունքում ու բազմաթիվ դեպքերում տնտեսության առանձին ոլորտներում, ապրանքային շուկաներում անհավասար մրցակցային իրավիճակը պայմանավորված է տնտեսության առանձին ոլորտները կարգավորող են այդ ոլորտներում վարչարարություն իրականացնող բոլոր պետական մարմինների կողմից արդար ու հավասար մոտեցումների կիրառմամբ: Այդ նպատակով կարելի է մրցակցային մարմինների կողմից պետական եւ համայնքային մարմինների հետ ակտիվ փոխգործակցությունը՝ վերջիններիս ոլորտներում առկա մրցակցության սահմանափակման դեպքերը վերացնելու նպատակով: Այս ուղղությամբ Հայաստանի մրցակցային մարմինը եւս բացահայտել է մի շարք դեպքեր, երբ օրինակ՝ դեղերի ներմուծման, մտավոր սեփականության իրավունքների գրանցման եւ պետական գնումների գործընթացում պետական մարմինների կողմից իրակա-

նացվել են մրցակցությունը սահմանափակող գործողություններ, ինչի արդյունքում շուկայում տեղծվել են անհավասար մրցակցային պայմաններ¹⁰:

Մրցակցության քաղաքականության մշակման եւ իրականացման հարցում ուշագրավ է ԱՄՆ, Եվրամիության եւ ՌԴ փորձը, որի ուսումնասիրությունը կարող է նպաստել Հայաստանում մրցակցության պաշտպանության ոլորտում առկա ձեռքբերումների ամրապնդմանը: Նշված երկրների մրցակցության քաղաքականության եւ օրենսդրության համեմատությունները թույլ են տալիս նշել, որ դրանցում հաճախ մրցակցային մարմինների գործունեության ուղղությունները նույն են եւ վերաբերում են շուկաներում հակամրցակցային համաձայնությունների կանխարգելմանը, խոշոր ընկերությունների կողմից կատարվող չարաշահումների բացահայտմանը, համակենտրոնացումների նկատմամբ հսկողության իրականացմանը: Տարբեր են մոտեցումները պետական օժանդակության եւ անբարեխիղճ մրցակցության գործողությունների նկատմամբ հսկողության իրականացման առումով: Ըստ Եւրոյան, երկրների մրցակցության քաղաքականության տարբերությունները պայմանավորված են տնտեսության զարգացման ու շուկայական տնտեսության ինստիտուտների կայացման մակարդակով, տնտեսության ճյուղային կառուցվածքով եւ տնտեսական զարգացման ոլորտային առանձնահատկություններով: Այսպես, ԱՄՆ-ում, որտեղ շուկայական տնտեսության ավանդույթները բավականին խորն են, դեռեւս 19-րդ դարի վերջից մեծ ուշադրություն է դարձվել մրցակցության խնդիրների լուծմանը: ԱՄՆ-ում մրցակցային քաղաքականությունն ընդհանուր առմամբ սկիզբ է առնում 1890թ. ընդունված Շերմանի հակամենաշնորհային օրենքով, որով արգելվում էր առեւտրի բնագավառում մրցակցությունը սահմանափակող գործողությունների իրականացումը: Երկրում մրցակցային միջավայրի ձեռավորման վրա կարեւոր նշանակություն է ունեցել նաեւ 1914թ. ընդունված Կլեյտոնի օրենքը, որով հսկողություն սահմանվեց նաեւ համակենտրոնացման գործարքների նկատմամբ¹¹:

ԱՄՆ-ում մրցակցության քաղաքականությունն իրականացվում է երկու պետական կառույցների՝ Արդարադատության դեպարտամենտի եւ Առեւտրի դաշնային հանձնաժողովի կողմից¹²: Ընդ որում, Արդարադատության դեպարտամենտը՝ որպես այդ ոլորտում գործադիր իշխանություն իրականացնող մարմին, օժտված է նաեւ մրցակցության օրենսդրության կիրառման լիազորություններով, ինչով էլ որոշակիորեն խաչվում է Առեւտրի դաշնային հանձնաժողովի կողմից իրականացվող գործառնությունների հետ, որոնք վերաբերում են մրցակցության օրենսդրության կիրառմանը եւ սպառողների իրավունքներ պաշտպանությանը:

Ի տարբերություն ԱՄՆ-ի՝ մրցակցային քաղաքականությունը Եվրոպայում զարգացում է ապրել 20-րդ դարի երկրորդ կեսին՝ համաեվրոպական ինստիտուտների ձեռավորմանը զուգընթաց¹³: Այս առումով առանցքային նշանակություն է ունեցել 1957թ. կնքված Հռոմի համաձայնագիրը, որով սահմանվել է մրցակցության քաղաքականության իրականացման հիմնական ուղղությունները՝ ներառելով հակամրցակցային համաձայնությունների, գերիշխող դիրքի չարաշահումների բացահայտման եւ պետական օժանդակության, հետագայում նաեւ համակենտրոնացումների նկատմամբ հսկողության ուղղությունները¹⁴:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ արեւմտյան երկրներում (ԵՄ, ԱՄՆ) մրցակցային մարմիններն առավել մեծ ուշադրություն են դարձնում հակամրցակցային համաձայնությունների բացահայտմանը եւ համակենտրոնացումների նկատմամբ հսկողության իրականացմանը, մինչդեռ հետխորհրդային երկրներում մրցակցային մարմինների նկատմամբ հասարակական սպասումներով պայմանավորված՝ բացահայտումները հաճախ վերաբերում են մենաշնորհի ու գերիշխող դիրք ունեցող ընկերությունների գործունեությանը¹⁵: Այս կապակցությամբ նշենք, որ հակամրցակցային համաձայնություններ կատարած ընկերու-

թյունների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառման առումով մրցակցային օրենսդրությամբ սահմանված մոտեցումները տարբեր են: Այսպես օրինակ, ԵՄ երկրներում հակամրցակցային համաձայնությունների նկատմամբ հիմնականում կիրառվում են վարչական (այդ թվում՝ ֆինանսական) պատասխանատվության միջոցներ, մինչդեռ ԱՄՆ-ում նման համաձայնությունների համար լայնորեն կիրառվում են նաև քրեական պատասխանատվության միջոցներ: Հայաստանում հակամրցակցային համաձայնությունների կնքման համար նախատեսված է ինչպես վարչական, այնպես էլ քրեական պատասխանատվություն, սակայն նկատենք, որ մինչ օրս հակամրցակցային համաձայնությունների գծով քրեական պատասխանատվության միջոցներ չեն կիրառվել: Միաժամանակ արեւմտյան երկրներում հակամրցակցային համաձայնությունների բացահայտմանն էապես նպաստում է այսպես կոչված՝ «առաջին բացահայտողի պատասխանատվության ազատման (սվազեցման)» մոտեցումը, որի արդյունքում անգամ երկար տարիներ շարունակ գործող հակամրցակցային համաձայնությունները հնարավոր է լինում բացահայտել¹⁶: Հայաստանի մրցակցության օրենսդրությամբ թեեւ նման մեխանիզմ ներկայումս սահմանված է, այդուհանդերձ այն չի գործում, քանի որ ինքնին առկա չէ հակամրցակցային համաձայնությունների բացահայտման արդյունավետ գործիքակազմ:

Տարբեր մոտեցումներ են սահմանված նաև պետական օժանդակությունների նկատմամբ հսկողության ուղղությամբ¹⁷: Այսպես, ի տարբերություն ԵՄ-ի, որում մեծ ուշադրություն է հատկացվում պետական օժանդակության ստացման միջոցով մրցակցային անհավասար միջավայրի ձեւավորմանը, ԱՄՆ-ում պետական օժանդակությունների գծով կարգավորումներ առկա չեն եւ միաժամանակ, ի տարբերություն ԵՄ-ի, որում անդրսահմանային (էրբ գործարքին մասնակցում են տարբեր երկրների ռեզիդենտ ընկերություններ) համակենտրոնացման նկատմամբ հսկողությունը իրականացնում է Մրցակցության հարցերով գլխավոր տնօրինության կողմից, ԱՄՆ-ի օրենսդիր մարմինը՝ Կոնգրեսը եւս առավել կարեւոր գործերով մասնակցում է ուսումնասիրության իրականացմանը¹⁸:

Անբարեխիղճ մրցակցության դեպքերի ուսումնասիրության առումով եւս դիտարկվող երկրների մոտեցումները տարբեր են: Այսպես, Եվրոպական Միությունում անբարեխիղճ մրցակցության օրենսդրության մշակումն իրականացվում է Եվրոպական հանձնաժողովի արդարադատության եւ սպառողների գլխավոր տնօրինության կողմից, իսկ կիրարկումն ապահովում են անդամ երկրների պետական մարմինները¹⁹: Մասնավորապես՝ Գերմանիայում եւ Ավստրիայում անբարեխիղճ մրցակցության գործերը դիտարկվում են ոչ թե մրցակցային մարմինների, այլ դատարանների կողմից: Ի տարբերություն նշված երկրների՝ Մեծ Բրիտանիայում, Դանիայում, Ֆինլանդիայում, Շվեդիայում եւ մի շարք այլ պետություններում անբարեխիղճ մրցակցության գործողությունները դառնում են մրցակցության մարմնի կողմից ուսումնասիրության առարկա²⁰: Հարկ է նաև նշել, որ Նիդեռլանդներում, Ռումինիայում, Կիպրոսում եւ Բուլղարիայում, բացի անբարեխիղճ մրցակցության դրսեւորումների կապակցությամբ մրցակցային մարմիններից, սպառողները եւ սպառողների շահերը ներկայացնող կազմակերպությունները կարող են դիմել նաև դատարան²¹: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա նշենք, որ անբարեխիղճ մրցակցությանն առջվող լիազորությունները վերապահված են Առեւտրի դաշնային հանձնաժողովին²²:

Հաշվի առնելով Հայաստանի հետ միեւնույն տնտեսական միության անդամ լինելու եւ նախկինում պլանային տնտեսություն ունենալու հանգամանքները՝ կարելու է նաև Ռուսաստանի մրցակցության քաղաքականության դիտարկումը: Այսպես, Ռուսաստանում մրցակցության պաշտպանության հարցերով զբաղվում է Դաշնային հակամենաշնորհային ծառայությունը, որի լիազորությունները վերջին տարիներին էականորեն ընդլայնվել են²³: Մասնավորապես, բացի մրցակցության

պաշտպանության հիմնական ուղղություններից, ծառայությունը զբաղվում է նաև բնական մենաշնորհների ոլորտի կարգավորմամբ եւ պետական գնումների մրցույթների նկատմամբ հսկողության իրականացմամբ²⁴: Համեմատության համար նկատենք, որ ինչպես Եվրոպական միջառնակների ոլորտը գտնվում է ոչ թե մրցակցային մարմինների, այլ դրանց կարգավորման նպատակով ստեղծված պետական այլ մարմինների կարգավորման տիրույթում: Միաժամանակ՝ Ռուսաստանի տնտեսության կառուցվածքում պետական ձեռնարկությունների մասնաբաժնի մեծությամբ պայմանավորված շուկաներում անհավասար մրցակցային միջավայրի ձեւավորման ռիսկերը մեծանում են: Ներկայումս Ռուսաստանում հակամենաշնորհային քաղաքականության իրականացման համար կառավարության կողմից սահմանված է միջոցառումների ծրագիր, որով նախատեսվում է նվազեցնել տնտեսությունում պետական ձեռնարկությունների մասնաբաժնի, իրականացնել միջոցառումներ տնտեսության առանձին ճյուղերում, բնական մենաշնորհներ հանդիսացող ոլորտներում մրցակցության եւ պետական գնումների մրցույթներում մրցակցության խորացման ուղղությամբ, բարձրացնել սպառողների իրավունքների պաշտպանության մակարդակը եւ այլն²⁵:

Մրցակցության քաղաքականության կատարելագործման եւ Եվրոպական տնտեսական միությանն անդամակցությամբ պայմանավորված Հայաստանը ներկայումս նախատեսում է իրականացնել օրենսդրական փոփոխություններ, որոնց արդյունքում մրցակցության օրենսդրությունը կհամապատասխանեցվի միության մրցակցության քաղաքականության ընդհանուր սկզբունքներին եւ կանոններին: Որպես նոր մեխանիզմ՝ նախատեսվող փոփոխություններով հանդերձ պատասխանատվության միջոցներ կսահմանվեն հակամրցակցային համաձայնություններին մասնակցող պետական մարմինների եւ տնտեսվարող սուբյեկտների պաշտոնատար անձանց նկատմամբ, կատարելագործման կենթարկվեն գերիշխող դիրք ունեցող ընկերությունների կողմից չարաշահման բացահայտման գործիքակազմը:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ մրցակցության քաղաքականությունն առանցքային նշանակություն ունի երկրի տնտեսական զարգացման, զբաղվածության ապահովման, ներդրումների ներգրավման, սոցիալական խնդիրների լուծման համար: Մրցակցային քաղաքականությունը մեծապես պայմանավորված է երկրի ընդհանուր տնտեսական քաղաքականությամբ, իսկ դրա արդյունավետությունը կախված է պետական բոլոր մարմինների կողմից բիզնես միջավայրին վերաբերող գործողություններում խտրական մոտեցումների բացառմամբ: Մրցակցությանը վերաբերող խնդիրների լուծման նպատակով գրեթե բոլոր երկրներում գործում են համապատասխան պետական մարմիններ, որոնց լիազորությունները դիտարկված երկրներում տարբեր են: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանում մրցակցության արդյունավետ քաղաքականության իրականացման համար Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի լիազորությունները ներկայումս բավարար չեն: Մասնավորապես՝ միջազգային փորձի վերաբերյալ կատարված համեմատությունները ցույց են տալիս, որ հակամրցակցային համաձայնությունների բացահայտման եւ պետական օժանդակությունների նկատմամբ հսկողության իրականացման համար գործող օրենսդրությունը բարելավման կարիք ունի, ինչի արդյունքում կմեծանան նաև Հանձնաժողովի՝ հակամրցակցային համաձայնություններ կայացրած տնտեսվարող սուբյեկտներին բացահայտելու հնարավորությունները, ինչպես նաև կնվազեն պետական եւ համայնքային մարմինների կողմից տրվող օժանդակության արդյունքում շուկաներում անհավասար մրցակցային պայմանների առաջացմանը վերաբերող ռիսկերը: Ինչ վերաբերում է համակենտրոնացումների նկատմամբ հսկողության իրականացմանը, ապա այս ուղղությամբ եւս Հանձնաժողովի իրավասությունները

սահմանափակ են եւ բարելավման կարիք ունեն, քանի որ ներկայումս Հանձնաժողովի տեսադաշտից դուրս են մնում բաժնետիրական ընկերություններում կատարվող հայտարարագրման ենթակա խոշոր գործարքները:

Ներկայացվել է 08.11.2016թ.
Ընդունվել է տպագրության 30.12.2016թ.

1. Антимонопольное право Европейского Союза, Тухамер Том, Будапешт 2014, с. 21-34.
2. Նույն տեղում՝ էջ 34-43
3. Alison Jones and Brenda Sufrin, *EU Competition Law, texts, cases and materials, Fourth Edition, Oxford University Press, 2014, p. 4-12.*
4. John Braithwaite, *Regulatory Capitalism, How it Works, Ideas for Making it Work Better, Edward Elgar Publishing, 2008, p. 1-17, p. 131-140.*
5. Imelda Maher, *Competition Law in the International Domain: Networks as a New Form of Governance, Journal of Law and Society Vol. 29, No. 1, New Directions in Regulatory Theory, 2002, p. 111.*
6. *Advocacy and competition policy, International competition network, ICN's Conference, Naples, Italy, 2002, p. 44-45, http://www.internationalcompetition-network.org/uploads/library/doc358.pdf.*
7. Նույն տեղում, էջ 46
8. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոկտեմբեր 18, www.arlis.am.
9. Abuse of dominance and monopolization, *Policy roundtables, Report, OECD, 1996, p. 9, http://www.oecd.org/daf/competition/abuse/2379408.pdf.*
10. Promoting compliance with competition law, *Policy Roundtables, Report, 2011, http://www.oecd.org/daf/competition/Promotingcompliancewithcompetitionlaw2011.pdf.*
11. Ex officio cartel investigations and the use of screens to detect cartels, *Policy Roundtables, OECD, Report, 2013, http://www.oecd.org/daf/competition/exofficio-cartel-investigation-2013.pdf.*
12. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, 2017 թվականի տարեկան գործունեության ծրագիր, Երևան 2016, էջ 12-14, 18-21
13. Douglas F. Broder, *U.S. Antitrust Law and Enforcement, A Practice Introduction, Oxford University Press, 2012, p. 2, p. 15.*
14. <https://www.ftc.gov/enforcement>, <https://www.justice.gov/atr/mission>.
15. Anestis S Papadopoulos, *The International Dimension of EU Competition Law and Policy, Cambridge University Press, 2010, p. 12-13.*
16. Ariel Ezrachi, *EU Competition Law, An Analytical Guide to the Leading Cases, Bloomsbury Publishing, 2014, p. 10.*
17. Alden F. Abbott, *A brief comparison of European and American antitrust law, The University of Oxford Centre for Competition Law and Policy, 2005, p. 4-10.*
18. Նույն տեղում:
19. Competition, *State Aid and Subsidies, Policy Roundtables, OECD, 2010, http://www.oecd.org/competition/sectors/48070736.pdf.*
20. European Parliamentary Research Center, *EU and US competition policies, Briefing, 2014, p. 3-10.*
21. Communication from the commission to the European parliament, the council, the European economic and social committee and the committee of the regions, *Guidance on the implementation/application of directive 2005/29/EC on Unfair commercial practices, Brussels, {COM(2016) 320}, European Commission: http://ec.europa.eu/consumers/consumer_rights/unfair-trade/unfair-practices/index_en.htm.*
22. Directorate general for internal policies, *Policy departament A, Economic and scientific policy, State of play of the implementation of the provisions on advertising in the unfair commercial practices legislation, EU Parliament documents, IP/A/IMCO/ST/2010-04 July 2010, p. 15-17.*
23. European Commission – DG Justice Study on the application of Directive 2005/29/EC on Unfair Commercial Practices in the EU Part 1 - Synthesis Report Final Report, 2011, p. 33-35; http://ec.europa.eu/justice/consumer-marketing/files/ucpd_final_report_part_1_synthesis.pdf.
24. Federal Trade Commission/Enforcement Authority <https://www.ftc.gov/about-ftc/what-we-do/enforcement-authority>.
25. Artemev Yu. I., Sushkevich A. G, *KonkurentnoopravoRossii (Russian Competition Law), National Research University, High School of Economics, Moscow 2012, p. 8, http://fas.gov.ru/about/mission.html.*
26. Федеральный закон от 26.07.2006 N 135-ФЗ (ред. от 05.10.2015) «О защите конкуренции», <http://fas.gov.ru/documents/documentdetails.html?id=418>.
27. План мероприятия («дорожная карта») «Развитие конкуренции и совершенствование антимонопольной политики», http://economy.gov.ru/minec/activity/sections/competition/programconcur/doc20121228_011.

Բանալի բառեր՝

նիսկերի կառավարման համակարգ, նիսկերի ցուցանիշ, գործարար գործընթաց, վարկային նիսկ, տոկոսադրույքի նիսկ, արտարժույթային նիսկ, իրացվելիության նիսկ:

Բանկային խմբի (այսուհետ՝ խումբ) նիսկերի կառավարման միասնական համակարգի¹² կազմի մեջ մտնող մեկ ֆինանսական կազմակերպությունների (այսուհետև՝ հՖԿ) էական նիսկերի ամբողջությունը համարվում է իբրև մեկ միասնական կառուցվածք, որը ներառում է.

- նիսկի բոլոր տեսակները,
- նիսկերի ինտեգրման բոլոր մակարդակները յուրաքանչյուր տեսակի համար:

Բանկային նիսկերի համակարգը ձևավորվում է բանկային նիսկերի աստիճանակարգման արդյունքում.

- տնտեսական նիսկերի դեպքում՝ ֆինանսական գործիքների մակարդակում.

- ոչ տնտեսական նիսկերի դեպքում՝ համապատասխան նիսկային գործոնների ստորին մակարդակում:

Ունիտար աստիճանակարգման հաջորդ մակարդակներում բանկային նիսկերի միասնությունն ապահովվում է նիսկերի միավորման հայեցակարգի միջոցով: Ստորին մակարդակի նիսկերի միավորման շնորհիվ որոշվում է ավելի բարձր աստիճանակարգման մակարդակի նիսկերի ընդհանուր նիսկը:

Աստիճանակարգման տարբեր տեսակների եւ մակարդակների նիսկերի ազդեցացումն ավարտվում է աստիճանակարգման վերին մակարդակում, այն էլ համբի մակարդակում միազույժ նիսկերի սահմանմամբ: Բանկային նիսկերի կոնկրետ կառուցվածքը որոշվում է հՖԿ-ներում կառավարման գործընթացների օպտիմալացման պահանջներին համապատասխան, որոնցից գլխավորը համարվում է նիսկերի կառուցվածքի ամբողջականության պահանջը:

Բանկային նիսկերի կառուցվածքի ամբողջականությունն ապահովում է նիսկերի կառուցվածքում ներառելով՝

- բանկային նիսկերի բոլոր տեսակները,
- նիսկերի ինտեգրման բոլոր կարելիորակային մակարդակները՝ հՖԿ-ում գործող կառուցվածքների համապատասխան (բիզնեսի կառուցվածք, վարչակազմակերպական կառուցվածք, հՖԿ-ի դուստր եւ փոխկապակցված կազմակերպությունների կառուցվածք, տեղեկատվական կառուցվածք):

Նույն մեթոդաբանությունը կիրառում է բանկային նիսկերի ստորին մեթոդաբանության դասակարգումը³⁴.

Ֆնդային նիսկի սահմանափակումները պետք է սահմանվեն սահմանաչափերի (տրամադրվելի) տեսքով: Սահմանաչափման օբյեկտ են հանդիսանում հՖԿ-ի հաշվին եւ նրա անուկից արժեթղթերով ու ածանցյալ գործիքներով գործառնությունների իրականացման արդյունքում ձևավորված հՖԿ-ի բաց դիրքերն արժեթղթերում եւ ածանցյալ գործիքներում: Արժեթղթերում եւ ածանցյալ գործիքներում բաց դիրքերի սահմանաչափերը որոշվում են՝ հաշվի առնելով համապատասխան արժեթղթերով ու ածանցյալ գործիքներով գործառնությունների իրականացման, ինչպես նաեւ արժեթղթերի եւ ածանցյալ գործիքների տեսակների եւ գործառնությունների կտրվածքով վարկային եւ շուկայական միազույժ նիսկերի մեծությունը գնահատելու հՖԿ-ի պահանջները: Լրացուցիչ կարող են սահմանվել հատուկ սահմանափակումներ՝ կալմանակարգված հՖԿ-ի բաց դիրքերի ձևավորմամբ եւ սահմանաչափերի օգտագործմամբ:

Սահմանաչափի սահմաններում գործառնություններ իրականացնելիս տվյալ սահմանաչափն օգտագործող ստորաբաժանումն ինքնուրույն հետեւում է դրա կատարմանը գործառնական օրվա ընթացքում: Սահմանաչափի գերազանցման դեպքում տվյալ սահմանաչափն օգտագործող ստորաբաժանումը նույն օրվա ընթացքում համապատասխան գործողություններ է ձեռնարկում խախտումը վերացնելու ուղղությամբ: Սահմանաչափերի կատարման հետագա վերահսկողությունը